

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՒՎԱԾ 1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-121 օրենքի (այսուհետ՝ օրենք)՝

1. 2-րդ հոդվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) **արտանետման անշարժ աղբյուր կամ կայանք՝** որոշակի տարածքում տարածական դիրքով անփոփոխ ամրակայված տեխնիկական միավոր, որտեղ իրականացվում են օբյեկտի գործունեության հետ տեխնիկապես շաղկապված մեկ կամ մի քանի գործունեության տեսակ և կարող են ունենալ կազմակերպված և անկազմակերպ արտանետումներ.»:

2. 2-րդ հոդվածը լրացնել 20-րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«20) **Բնապահպանական համալիր թույլտվություն՝** Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկին համապատասխան աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող կայանքի ամբողջությամբ կամ մասամբ շահագործման համար, ըստ օգտագործվող լավագույն հասանելի տեխնոլոգիայի, լիազոր մարմնի կողմից տրվող գրավոր լիազորություն.»:

ՀՈՒՎԱԾ 2. Օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ պարբերությունից հետո լրացնել

«- աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող կայանքների ցանկի հաստատումը և ցանկին համապատասխան արտադրության ոլորտների աղտոտող նյութերի արտանետումների նորմատիվների (չափաքանակների տիրույթների) սահմանումը.»:

ՀՈՒՎԱԾ 3. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1. երկրորդ պարբերությունում «խմբերի» բառից հետո լրացնել «կամ աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող արտադրության ոլորտների» բառերով:

2. երկրորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերություններ.

«Աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող կայանքների համար աղտոտող նյութերի արտանետումների նորմատիվները սահմանվում են ըստ արտադրության ոլորտների: Արտադրության ոլորտների համար սահմանված աղտոտող նյութերի արտանետումների նորմատիվները պարունակում են աղտոտող նյութերի արտանետումների

չափաքանակների տիրույթներ, որոնց հիման վրա որոշվում են տվյալ արդյունաբերության ոլորտի աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող յուրաքանչյուր կայանքի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները՝ հիմք ընդունելով տվյալ ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության կողմից օգտագործվող լավագույն հասանելի տեխնոլոգիան:»:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 14-րդ՝

1. հողվածի առաջին պարբերության առաջին նախադասությունում «նորմատիվները» բառից հետո լրացնել «, բացառությամբ բարձր աղտոտման պոտենցիալ ունեցող արտադրության ոլորտների,» բառերով:

2. Հողվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերություններով.

«Աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող կայանքի ամբողջությամբ կամ մասամբ շահագործման համար լիազոր մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով տրվում է բնապահպանական համալիր թույլտվություն, որում ներառված են նաև տվյալ արդյունաբերության ոլորտի համար սահմանված աղտոտող նյութերի արտանետումների չափաքանակների տիրույթների և օգտագործվող լավագույն հասանելի տեխնոլոգիայի հիման վրա տվյալ կայանքի համար որոշված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները:

Աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող կայանքի համար տրվող համալիր թույլտվության շրջանակները, համալիր թույլտվության տրման կարգը, ժամկետները, սկզբունքները, պահանջները, պայմանները, կառավարության, լիազոր պետական մարմնի, այլ շահագրգիռ մարմինների և կայանքը շահագործողի իրավասություններն ու պարտականությունները, բնապահպանական այլ գործառույթների հետ կապը, հսկման ու վերահսկման մեթոդներն ու առանձնահատկությունները, պատասխանատվությունն ու տնտեսական մեխանիզմները, հասարակայնության ներգրավումն ու տեղեկատվության մատչելիությունը և այլն սահմանվում են օրենքով: Օրենքի համաձայն աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող կայանքների ցանկը և յուրաքանչյուր արդյունաբերության ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիայով պայմանավորված աղտոտող նյութերի արտանետումների չափաքանակների տիրույթները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, իսկ յուրաքանչյուր արդյունաբերության ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիայի վերաբերյալ տեղեկատու փաստաթղթի եզրակացությունը հաստատվում է լիազոր մարմնի կողմից, որը ներառում է լավագույն հասանելի տեխնոլոգիայի հակիրճ նկարագրությունը (տեխնիկական մեթոդների, տեխնոլոգիական գործընթացների ու սարքավորումների նկարագրությունը, ռեժիմների և աղտոտող նյութերի պարամետրերի կամ ցուցանիշների բնութագրերը), ԼՀՏ կիրառելիությունը գնահատելու վերաբերյալ տեղեկատվությունը և կազմակերպության բնապահպանական կառավարման համակարգերը (արտանետումների և դրանց նվազեցման մակարդակները, մոնիթորինգը, համալիր բնապահպանական միջոցառումները):»:

ՀՈՂՎԱԾ 6. Մույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

“ ___ ” _____ N

“Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. ապրիլի 22-ի N259 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է

1. “Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. ապրիլի 22-ի N259 որոշման հավելվածում կետ 4ա) շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

ա) մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման աղբյուրներ ունեցող կազմակերպությունների հաշվառում, ինչպես նաև այդ կազմակերպությունների գործունեության տեսակները:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից տաս օր հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

“ ___ ” _____ N

“Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 30.03.1999թ N192 և 21.08.2008թ. N953 -Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ դեկտեմբերի 27-ի N1673 -Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին”

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշել է

1. Հավելված 3-ի բ կետը լրացնել հետյալ նախադասությամբ՝ “արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման ժամանակ նախապատվությունը տրվում է “լավագույն հասանելի տեխնոլոգիաների” ներդրմանը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից տաս օր հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԱԶԻ ԱՅՐՄԱՄԲ
ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ (ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՏԻՐՈՒՑԹՆԵՐԸ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

" ____ " _____ ի 201... թվականի N ____ -Ն

Ղեկավարվելով <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 14-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել էլեկտրաէներգիայի արդյունաբերության ոլորտի գազի այրմամբ էներգիայի արտադրության շահագործման պրոցեսում առաջացող մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) ըստ աղտոտման աղբյուրների և հիմնական աղտոտող նյութերի՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝

1) էլեկտրաէներգիայի արդյունաբերության ոլորտի գազի այրմամբ էներգիայի արտադրության աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող յուրաքանչյուր կայանքի համար մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումները որոշելիս ղեկավարվել սույն որոշման հավելվածներով սահմանված հիմնական աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվներով (չափաքանակների տիրույթներով),

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից եռամսյա ժամկետում հաստատել էլեկտրաէներգիայի արդյունաբերության ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիայի տեղեկատու փաստաթղթի եզրակացությունը, որը ներառում է լավագույն հասանելի տեխնոլոգիայի հակիրճ նկարագրությունը (տեխնիկական մեթոդների, տեխնոլոգիական գործընթացների ու սարքավորումների նկարագրությունը, ռեժիմների և աղտոտող նյութերի պարամետրերի կամ ցուցանիշների բնութագրերը), ԼՀՏ կիրառելիությունը գնահատելու վերաբերյալ տեղեկատվությունը և կազմակերպության բնապահպանական կառավարման համակարգերը (արտանետումների և դրանց նվազեցման մակարդակները, մոնիթորինգը, համալիր բնապահպանական միջոցառումները):

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված գերատեսչական ակտի պետական գրանցումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կառավարության 201... թվականի
_____ -ի N ____ -Ն որոշման

**ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԱԶԻ ԱՅՐՄԱՄԲ
ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ (ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՏԻՐՈՒՑԹՆԵՐԸ)՝ ԸՍՏ
ԱՂՏՈՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ**

1. Էլեկտրաէներգիայի արդյունաբերության ոլորտի գազի այրմամբ էներգիայի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների շահագործման պրոցեսում առաջացող նորմավորման ենթակա հիմնական աղտոտող նյութերն են.

- 1) ազոտի օքսիդները՝ ազոտի երկօքսիդի հաշվարկով (NO_x),
- 2) ածխածնի մոնօքսիդը (CO):

2. Էլեկտրաէներգիայի արդյունաբերության ոլորտի գազի այրմամբ էներգիայի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների շահագործման պրոցեսում արտանետվող հիմնական աղտոտող նյութերի տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) ըստ արտադրության տարբեր գործընթացների, որոնք հանդիսանում են արտանետումների աղբյուրներ, սահմանված են աղյուսակում:

**Գազի այրմամբ էներգիայի արտադրության արտանետումների աղբյուրները,
հիմնական աղտոտող նյութերը և դրանց չափաքանակների տիրույթները**

Աղյուսակ

Էներգասարքավորման տեսակը	Աղտոտող նյութերի չափաքանակների տիրույթը (մգ/Նմ ³)	Օ ₂ (%)
--------------------------	---	-----------------------

	NO _x	CO	
Գազային տուրբիններ			
Նոր գազային տուրբիններ	20-50	5-100	15
Գոյություն ունեցող գազային տուրբիններ	50-90	30-100	15
Գազային շարժիչներ			
Նոր գազային շարժիչներ	20 – 75	30 – 100	15
Գոյություն ունեցող գազային շարժիչներ	20 –100	30 – 100	15
Գազային կաթսաներ			
Նոր գազային կաթսաներ	50 – 100	30 – 100	3
Գոյություն ունեցող գազային կաթսաներ	50 – 100	30 – 100	3
Շոգեգազային ցիկլ			
Նոր շոգեգազային ցիկլ (օգտահանող կաթսա)	20-50	5-100	15
Գոյություն ունեցող շոգեգազային ցիկլ (օգտահանող կաթսա)	20-90	5-100	15

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՇԻՆԱՆՑՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՑԵՄԵՆՏԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂՆ

**ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ
(ԶՄՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ) ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

" ____ " _____ ի 201... թվականի N ____ -Ն

Ղեկավարվելով <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 14-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել շինանյութերի արդյունաբերության ոլորտի ցեմենտի արտադրության շահագործման պրոցեսում առաջացող մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) ըստ աղտոտման աղբյուրների և հիմնական աղտոտող նյութերի՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝

1) շինանյութերի արդյունաբերության ոլորտի ցեմենտի արտադրության աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող յուրաքանչյուր կայանքի համար մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումները որոշելիս ղեկավարվել սույն որոշման հավելվածներով սահմանված հիմնական աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվներով (չափաքանակների տիրույթներով),

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից եռամսյա ժամկետում հաստատել շինանյութերի արդյունաբերության ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիայի տեղեկատու փաստաթղթի եզրակացությունը, որը ներառում է լավագույն հասանելի տեխնոլոգիայի հակիրճ նկարագրությունը (տեխնիկական մեթոդների, տեխնոլոգիական գործընթացների ու սարքավորումների նկարագրությունը, ռեժիմների և աղտոտող նյութերի պարամետրերի կամ ցուցանիշների բնութագրերը), ԼՀՏ կիրառելիությունը գնահատելու վերաբերյալ տեղեկատվությունը և կազմակերպության բնապահպանական կառավարման համակարգերը (արտանետումների և դրանց նվազեցման մակարդակներ, մոնիթորինգը, համալիր բնապահպանական միջոցառումները):

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված գերատեսչական ակտի պետական գրանցումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կառավարության 201... թվականի
_____ -ի N ____ -Ն որոշման

**ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՑԵՄԵՆՏԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ
ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ**

**(ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ)՝ ԸՍՏ ԱՂՏՈՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ**

1. Շինանյութերի արդյունաբերության ոլորտի ցեմենտի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների շահագործման պրոցեսում առաջացող նորմավորման ենթակա հիմնական աղտոտող նյութերն են.

1) պինդ մասնիկները (ՊՄ) կամ փոշին, որոնց կազմում առկա են՝

- սնդիկ (Hg),
- կադմիում (Cd),
- տիտան (Ti),
- կապար (Pb),
- արսեն (As),
- սուրմա (Sb),
- քրոմ (Cr),
- պղինձ (Cu),
- մանգան (Mg),
- նիկել (Ni),
- վոլֆրամ (V),

2) ազոտի օքսիդները՝ ազոտի օքսիդի հաշվարկով (NO_x),

3) ծծմբի երկօքսիդը (SO_2),

4) ընդհանուր ածխածինը (C),

5) քլորաջրածինը (HCl),

6) ֆտորաջրածինը (HF),

7) պոլիքլորացված դիբենզոդիօքսինները, դիբենզոֆուրանները (ՊՔԴԴ/Ֆ):

2. Շինանյութերի արդյունաբերության ոլորտի ցեմենտի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների շահագործման պրոցեսում արտանետվող հիմնական աղտոտող նյութերի տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) ըստ արտադրության տարբեր գործընթացների, որոնք հանդիսանում են արտանետումների աղբյուրներ, սահմանված են աղյուսակում:

Ցեմենտի արտադրության արտանետումների աղբյուրները, հիմնական աղտոտող նյութերը և դրանց չափաքանակների տիրույթները

Աղյուսակ

Գործընթացի /սարքավորման/ անվանումը	Փոշի	NOx	SO ₂	C	HCl	HF	ՊՔԴԴ/Ֆ	Մետաղները՝ փոշուկազմում
Հումքի ընդունում, պահեստավորում, տեղափոխում, խառնում, ջարդում և մանրացում, չորացում և մաղում	≤10 մգ/Նմ ³	-	-	-	-	-	-	-
Կլինկերի թրծման վառարան	< 10 - 20 մգ/Նմ ³	- 500 մգ/Նմ ³ (ցիկլոնային ջերմափոխանակիչով) - 400-800 մգ/Նմ ³ (երկար պտտվող վառարան)	50 - 400 մգ/Նմ ³	1 – 80 մգ/Նմ ³	<10 մգ/Նմ ³	<1 մգ/Նմ ³	<0,05 – 0,1 նգ I-TEQ/Նմ ³	- Hg < 0.05 մգ/Նմ ³ - Σ (Cd, Tl) < 0.05 մգ/Նմ ³ - Σ (As, Sb, Pb, Cr, Co, Cu, Mg, Ni, V) < 0.5 մգ/Նմ ³
Կլինկերի մանրեցում և հովացում	< 10 - 20 մգ/Նմ ³	-	-	-	-	-	-	-

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊՂՆՁԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂՆ
ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ
(ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ) ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

" ____ " _____ ի 201... թվականի N ____ -Ն

Ղեկավարվելով <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 14-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտի՝

1) առաջնային պղնձի արտադրության շահագործման պրոցեսում առաջացող մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) ըստ աղտոտման աղբյուրների և հիմնական աղտոտող նյութերի՝ համաձայն N 1 հավելվածի,

2) երկրորդային պղնձի արտադրության շահագործման պրոցեսում առաջացող մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) ըստ աղտոտման աղբյուրների և հիմնական աղտոտող նյութերի՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝

1) գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտի պղնձի արտադրության աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող յուրաքանչյուր կայանքի համար մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումները որոշելիս ղեկավարվել սույն որոշման N 1 և N 2 հավելվածներով սահմանված տեխնիկական նորմատիվներով (չափաքանակների տիրույթներով),

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից եռամսյա ժամկետում հաստատել գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտի լավագույն հասանելի տեխնոլոգիայի տեղեկատու փաստաթղթի եզրակացությունը, որը ներառում է լավագույն հասանելի տեխնոլոգիայի հակիրճ նկարագրությունը (տեխնիկական մեթոդների, տեխնոլոգիական գործընթացների ու սարքավորումների նկարագրությունը,

ռեժիմների և աղտոտող նյութերի պարամետրերի կամ ցուցանիշների բնութագրերը), ԼՀՏ կիրառելիությունը գնահատելու վերաբերյալ տեղեկատվությունը և կազմակերպության բնապահպանական կառավարման համակարգերը (արտանետումների և դրանց նվազեցման մակարդակները, մոնիթորինգը, համալիր բնապահպանական միջոցառումները):

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված գերատեսչական ակտի պետական գրանցումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության
կառավարության 201... թվականի
_____ -ի N ____ -Ն որոշման

**ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ
ՊՂՆՁԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ (ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ)՝ ԸՍՏ ԱՂՏՈՏՄԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ**

1. Գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտի առաջնային պղնձի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների շահագործման պրոցեսում առաջացող նորմավորման ենթակա հիմնական աղտոտող նյութերն են.

1) պինդ մասնիկները (ՊՄ) կամ փոշին, որոնց կազմում առկա են՝

- կապար (Pb),

- արսեն (As),

2) ծծմբի երկօքսիդը (SO₂):

2. Գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտի առաջնային պղնձի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների շահագործման պրոցեսում արտանետվող հիմնական աղտոտող նյութերի տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) ըստ արտադրության տարբեր գործընթացների, որոնք հանդիսանում են արտանետումների աղբյուրներ, սահմանված են աղյուսակում:

**Առաջնային պղնձի արտադրության արտանետումների աղբյուրները, հիմնական
աղտոտող նյութերը և դրանց չափաքանակների տիրույթները**

Աղյուսակ

Արտանետումների աղբյուրը	Փոշու արտանետումների չափաքանակների տիրույթները	Ծմբի երկօքսիդի (SO ₂) չափաքանակների տիրույթները
Հումքի ընդունում, պահեստավորում, բեռնում-բեռնաթափում, տեղափոխում, բաժնավորում, խառնում, ջարդում և մանրացում, չորացում, մաղում	≤5 մգ/Նմ ³	-
Խտանյութի չորացում	≤10 մգ/Նմ ³	≤ 300 մգ/Նմ ³
Խտանյութի թրծում	-	200 – 500 մգ/Նմ ³ (արտանետվող գազերում SO ₂ < 1 %)
Խտանյութի հալում	- ՊՄ ≤10 մգ/Նմ ³ - Pb =1-3 մգ/Նմ ³ - As ≤1 մգ/Նմ ³	
Կոնվերտում		
Մետաղի ձուլում ,	- ՊՄ ≤ 5 մգ/Նմ ³ - Pb =1-3 մգ/Նմ ³ - As ≤ 1 մգ/Նմ ³	≤ 300 մգ/Նմ ³
Կաղապարում		
Խարամի մշակում /աղքատացում	- ՊՄ ≤5 մգ/Նմ ³ - Pb = 3 մգ/Նմ ³	≤ 200 մգ/Նմ ³
Միակոնտակտային /միանգամյա աբսորբման գործընթաց համատեղված արտանետումների նվազեցման միջոցառումների հետ (SO ₂ >1%, սակայն ≤4.5% ծավ.)	-	100-450 մգ/Նմ ³
Երկկոնտակտային /երկակի աբսորբման գործընթաց (SO ₂ >4.5% ծավ.)		200-770 մգ/Նմ ³

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության
կառավարության 201... թվականի
_____ -ի N ____ -Ն որոշման

**ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ
ՊՂՆՁԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ (ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ)՝ ԸՍՏ ԱՂՏՈՏՄԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ**

1. Գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտի երկրորդային պղնձի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների շահագործման պրոցեսում առաջացող նորմավորման ենթակա հիմնական աղտոտող նյութերն են.

1) պինդ մասնիկները (ՊՄ) կամ փոշին, որոնց կազմում առկա են՝

- կապար (Pb),

- արսեն (As),

2) պոլիքլորացված դիբենզոդիօքսիները, դիբենզոֆուրանները (ՊԲԴԴ/Ֆ)

3) ընդհանուր ածխածինը,

4) ծծմբի երկօքսիդը (SO₂):

2. Գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտի երկրորդային պղնձի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների շահագործման պրոցեսում արտանետվող հիմնական աղտոտող նյութերի տեխնիկական նորմատիվները (չափաքանակների տիրույթները) ըստ արտադրության տարբեր գործընթացների, որոնք հանդիսանում են արտանետումների աղբյուրներ, սահմանված են աղյուսակում:

**Երկրորդային պղնձի արտադրության արտանետումների աղբյուրները, հիմնական
աղտոտող նյութերը և դրանց չափաքանակների տիրույթները**

Աղյուսակ

Արտանետումների աղբյուրը	Փոշու արտանետումների չափաքանակների տիրույթները	ՊՔԴԴ/Ֆ չափաքանակների տիրույթները	Ընդանուր ածխածնի չափաքանակների տիրույթները	Մծմբի երկօքսիդի (SO ₂) չափաքանակների տիրույթները
Հումքի ընդունում, պահեստավորում, բեռնում-բեռնաթափում տեղափոխում, բաժնավորում, խառնում, ցարդում և մանրացում, չորացում, մաղում	≤5 մգ/Նմ ³	-	≤ 10 մգ/Նմ ³	-
Յուղագրկում	-	-	≤ 10 մգ/Նմ ³	-
Հալում	- ՊՄ ≤ 5 մգ/Նմ ³	≤0.1ng I-TEQ/Նմ ³	-	100 – 300 մգ/Նմ ³ (< 1 % SO ₂)
Կոնվերտում	- Pb = 1-3 մգ/Նմ ³ - As ≤ 1 մգ/Նմ ³			
Մետաղի հալում	- ՊՄ ≤ 5 մգ/Նմ ³ - Pb = 1 մգ/Նմ ³ - As ≤ 1 մգ/Նմ ³		≤ 10 մգ/Նմ ³	≤ 300 մգ/Նմ ³
Կաղապարում	-	-	-	
Պղնձի վառարան-հավաքոց	≤5 մգ/Նմ ³	-	-	-
Խարամի մշակում /աղքատացում/	- ՊՄ ≤ 5 մգ/Նմ ³ - Pb = 3 մգ/Նմ ³	-	-	≤ 200 մգ/Նմ ³

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

"-----" ----- 201 թ. N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԱԶԻ ԱՅՐՄԱՄԲ ԷՆԵՐԳԻԱՅԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՍՄԱՆԵԼԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով "Մթնոլորտային օդի պահպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 201... թվականի " _____ " ի " ____ "-ի N ____-Ն որոշման 2-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի արդյունաբերության ոլորտի գազի այրմամբ էներգիայի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթի եզրակացությունը>>՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում ներառված պայմանները պարտադիր կիրառման ենթակա են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 201... թվականի " _____ " ի " ____ " N ____-Ն որոշման կետով հաստատված Հայաստանի Հանրապետությունում աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող կայանքների ցանկում ընդգրկված ցեմենտի արտադրությամբ զբաղվող այն կազմակերպությունների կողմից, որոնց օրենքով սահմանված կարգով պետք է տրամադրվեն բնապահպանական համալիր թույլտվություններ,

2) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և բնապահպանական համալիր թույլտվությունների գործընթացում ընդգրկված համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

"-----" ----- 201 թ. N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՑԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՀԱՍԱՆԵԼԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԻ
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով "Մթնոլորտային օդի պահպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 201... թվականի " _____ " ի " ____ "-ի N ____-Ն որոշման 2-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության շինանյութերի արդյունաբերության ոլորտի ցեմենտի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթի եզրակացությունը>>՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում ներառված պայմանները պարտադիր կիրառման ենթակա են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 201... թվականի " _____ " ի " ____ " N ____-Ն որոշման կետով հաստատված Հայաստանի Հանրապետությունում ադոտոման բարձր պոտենցիալ ունեցող կայանքների ցանկում ընդգրկված ցեմենտի արտադրությամբ զբաղվող այն կազմակերպությունների կողմից, որոնց օրենքով սահմանված կարգով պետք է տրամադրվեն բնապահպանական համալիր թույլտվություններ,

2) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և բնապահպանական համալիր թույլտվությունների գործընթացում ընդգրկված համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

"-----" ----- 201 թ. N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊՂՆՁԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՀԱՍԱՆԵԼԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԻ
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով "Մթնոլորտային օդի պահպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 201... թվականի " _____ " ի " ____ "-ի N ____-Ն որոշման 2-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտի պղնձի արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթի եզրակացությունը>>՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում ներառված պայմանները պարտադիր կիրառման ենթակա են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 201... թվականի " _____ " ի " ____ " N ____-Ն որոշման կետով հաստատված Հայաստանի Հանրապետությունում աղտոտման բարձր պոտենցիալ ունեցող կայանքների ցանկում ընդգրկված առաջնային և երկրորդային պղնձի արտադրությամբ զբաղվող այն կազմակերպությունների կողմից, որոնց օրենքով սահմանված կարգով պետք է տրամադրվեն բնապահպանական համալիր թույլտվություններ,

2) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և բնապահպանական համալիր թույլտվությունների գործընթացում ընդգրկված համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ